№ 87 Մայիս 27 (Յունիս 8) 1880 Մայիս 27 (Յունիս 8) № 87

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք գրվում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրվայ կենսական հարց.—Ներքին տեսութիւն. Շերամապահութիւն. Նամակ Ալէքսանդրապօլից. Նամակ Շուշուց. Նամակ խմբագրին.—Արտաքին տեսութիւն. Թիւրքիա.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Ցենզուրական կօմիտէտի դատը «Մշակի» խմբագրի դէմ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կառավարիչք Քաղաքային, Առևտրական և Արհեստական վարչութեանց յայտնում են, որ մայիսի 28-ին, առաւօտեան 10 ժամին Հանգուցեալ Կայսրուհու Թագման օրը, անկախ անցեալ հոգեհանգիստներից, պիտի կատարվի հայոց Վանքի Մայր եկեղեցում լիտուրգիայ, Թագման հանդէս: Սորա համար խնդրում են շնորհ բերել նշանակեալ օրը բոլոր Թիֆլիսի բնակչաց:

ՕՐՎԱՅ ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ

I

Հայոց ազգային պատմութիւնը այսօր ներկայացնում է մի ճգնաժամ: Հիւանդ մարդի ճգնաժամի նման դա կարող է կամ մահացնել կամ կենդանացնել:

Այսօր պէտք է մի մեծ խորհուրդ կազմել: Մեր հիւանդին օգնութիւն հասաւ Մեծափառ Կայսրը, Անգլիայի ուղեցոյցը, գաղղիացի հանրակալը, իսկ մե՞նք, իսկ մե՞նք....

Մենք ննջե՞նք: Եթէ ոչ յանուն ազգութեան, կամենաք յանուն մարդկութեան, յանուն մարդասիրութեան: Հայոց պատմութիւնը կարդալուց, մարդ ամենից շատ վշտանում է նորա վրա, որ իրանք հայերը, գործը իր ժամանակին չեն կատարել: «Ախ. ասում ես, թէ ես ապրէի այս ինչ րոպէին, տես թէ ես ինչ կանէի»: Ինչ էք կարծում պարոններ, այսօրուայ օրը, հէնց «տես թէ ես ինչ կանէի», անելու ժամանակն է: Հայոց վշտերը իրանց զենիթին են հասել: Ձեր ձեռքերը բաց են, ազատ են գործելու, ձեր դարերով խեղդված զգացմունքը այսօր կարող են ելք գտնել: Պատմութիւնը ինքն է ձեր ձեռքը զէնք տալիս, այդ զէնքը ձեր ազգի թըշուառութիւններն են: Գիտացէ՛ք օգուտ քաղել հայ ազգի մանկութեաց սառը դիակներից: Բաւական են գոչեր, բաւական են արինը: Ձեր ցանկութեանցը նպատակ դրեցէ՛ք և սահման, ձեր գործոցը մի ընդհանուր թել, ձեր ոյժերին խելացի գործադրութիւն:

Ո՞վ չէ նկատում, որ «Մշակի» խմբագիրը իսկապէս գործում է այն, ինչ որ պէտք է մի մեծ ընկերութիւն գործի, այսօր սա, վաղը նա, միւս օրը ո՛չ ոք, այսօր հացի հարց, վաղը հիւանդութիւնների հարց, միւս օրը ոչինչ, կամ ո՛ գիտէ ինչ հարց: Հաւատարմութիւն դէպի այս անձը, այս մանր մունր ընկերութիւնը, անհաւատարմութիւն դէպի միւսը: Այսօր ատելութիւն դէպի Սօդոս, վաղը դէպի Պօղոս: Մէկը դրամը «Մշակին» է ուղարկում, միւսը կօնսիստորիային, յետոյ կռիւ է բացվում, կամենում են յետ խլել միւսին յանձնել: Փող են ժողովում, Էջմիածին ուղարկում, յետոյ նոյնը կնճռոտ հարց շինում, մասնաժողով են կազմում գաղթելոց օգնելու համար, յետոյ նոյն մասնաժողովի անդամների անունը մոռանում, նոյն դրամը փոխեցնում, մասնաժողովն էլ իրա գործը մոռանում:

Մէկին թէ մտածում են Հայաստան ուղարկելու, գործոց դըրութիւնը քննելու, չը գիտեն թէ յետոյ հաշիւն ինչպէս տան նորան, մէկը տալիս է, միւսը չէ տալիս, բոլորն էլ զզվում են. զըզվում են և ապագայի համար:

Մէկզմէկու վրա խօսում, փնտփնտում, բոլորն էլ իրարից անբաւական, բոլորն էլ իրար անազնիւ և տգէտ համարում, ո՞ւմ դիմեն, ո՞ւմ գանգատվեն, ո՞վ է հեղինակը, ո՞ւմ յայտնեն իրանց ցաւերը, իրանց մտածողութիւնները: Ո՞վ է պարագլուխը:

Բ. Նաւասարդեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՎՐԱ

Բոլորովին անկասկածելի է, որ շերամապահութիւնը Կովկասի հարստութեան գլխաւոր աղբիւրներից մէկն է: Շերամապահութիւնը տարածված է մեր երկրի բոլոր կողմերում և առաւել զարգացած է Երևանի և Ելիսաւէտպօլի նահանգներում: Ես չեմ կարող ճշտապէս որոշել, թէ ինչ քանակութեամբ խոզակ (կոկոն, բարամա,) կամ մետաքս է արտադրում մեր երկիրը, միայն այսքանս կասեմ, որ ամենայն տեղ, ուր միայն կարելի է շերամապահութիւնը, նա կազմում է գիւղացու հարստութեան ամենագլխաւոր աղբիւրը:

Կարծեմ հարկ չը կայ ասելու՝ որ մի այսպիսի զբաղմունքի վրա, ինչպէս է շերամապահութիւնը, պէտք է ամենախիստ ուշադրութիւն դարձնել, նորա վարելու եղանակը պէտք է բազմակողմանի քննադատութեան ենթարկել, երևան հանել նորա թոյլ կողմերը և ցոյց տալ ուղիղ, առաւել նպատակայարմար միջոցներ: Այսպէս են վարվում ամենայն տեղ, ուր կամենում են մի որ և իցէ արուեստ կամ զբաղմունք ծաղկեցնել. շերամապահութեան գալով, դորա համար Եւրոպայում մինչև անգամ կօնգրէսներ են կազմում, ուր շերամապահական երկիրներից պատգամաւորներ ժողովվելով, ի միասին խորհրդակցում են նորա ծաղկեցման վրա և նորան սպառնացող ախտերի հեռացնելուն վրա: Մեզանում, դժբաղդաբար, այս բանի վրա ուշադրութիւն դարձնող չը կայ՝ այնպէս, ինչպէս հարկն է, չը նայելով որ մեր երկիրը այս կողմանէ, կարելի է ասել, ամենայարմարն է: Մեզանում ամենայն ինչ բաղդի բերման է ձգված և հետևաբար, փոխանակ հետզհետէ առաւել կատարելագործվելու, միշտ կանգնած է մի և նոյն աստիճանի վրա, եթէ չասեմ որ առաւել դէպի վատն է ընթանում: Մեր Կովկասի միակ գիւղատնտես-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑԵՆԶՈՒՐԱԿԱՆ ԿՕՄԻՏԷՏԻ ԳԱՆԳԱՏԸ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳԻՐ Գ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԷՄ

Մայիսի 22-ին քննվեցաւ Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում ցենզուրական կօմիտէտի գանգատը «Մշակի» խմբագիր պ. Արծրունու դէմ: Նիստին նախագահում էր պ. Գարբովսկի, սուդի անդամներն էին պ. պ. Պօլտօրացկի և իշ. Բէհբութով, իսկ պրօկուրօրի պաշտօնը կատարում էր պ. Վսեվոլոժսկի: Սկզբում կարդացվեցաւ մեղադրական ակտը, որի մէջ յայտնված էր, թէ պ. Արծրունին «Մշակի» 211, 212, 213 և 214 համարներում տպել է զանազան լուրեր և նկատողութիւններ առանց ցենզորի թոյլտուութեան, ի միջի այլոց և Վիկտոր Հիւգօի Բէշիքթաշի եպիսկոպոս Խորէն Նարբէյին գրված նամակը, և ցենզուրական կօմիտէտի գանգատի պատճառով պէտք էր դատի ենթարկել պ. Արծրունուն:

Նախագահը դառնալով պ. Արծրունուն, հարցրեց արդեօք նա համարում է իրան մեղաւոր: Պ. Արծրունին պատասխանեց, թէ իրան մեղաւոր չէ համարում, այն պատճառով որ, թէև ինքը տպել է լուրեր և զանազան նկատողութիւններ առանց ցենզորի պաշտօնապէս թոյլտուութեան,—բայց տպել է նրանց այն բերանացի համաձայնութիւնների հիման վրա, որ կայացած էին իր և ցենզորի մէջ, մինչև լուրերը տպելուց շատ առաջ:

Նախագահը դարձաւ դէպի ցենզոր պ. Մելիք-Մէրաբովը, հարցնելով, թէ ինչ ունի ասելու: Պ. Մելիք-Մէրաբովը պատասխանեց, թէ ինքը ներկայանում է սուդի առջև որպէս արևելեան լեզուների գլխաւոր ցենզոր և որպէս ցենզուրական կօմիտէտի ներկայացուցիչ: Ասաց, թէ ինքը հարկաւոր չէ համարում պատասխանել սուդին, արդեօք ինչ պայմաններ են եղել իր և «Մշակի» խմբագրի մէջ, որովհետև ցենզուրան ունի տպագրութեան մասին իր առանձին պայմանները, որոնց նա հարկաւոր չէ համարում հրապարակաւ երևան հանել:

Պ. Նախագահը նկատեց պ. Մելիք-Մէրաբովին, թէ նա կանչված է սուդը ո՛չ որպէս ցենզուրական կօմիտէտի ներկայացուցիչ, այլ որպէս վկայ, և պարտաւոր է պատասխանել, արդեօք եղե՞լ է իր և պ. Արծրունու մէջ այնպիսի պայման, որով թոյլ էր տրված պ. Արծրունուն լցնել իր լրագրի բաց մնացած՝ տեղերը լուրերով կամ զանազան նկատողութիւններով: Պ. Մելիք-Մէրաբովը դարձեալ ասաց, թէ ինքը հարկաւոր չէ համարում պատասխանել այդ մասին: Պ. Նախագահը կրկնեց, թէ նա պարտաւոր է պատասխանել, որովհետև նրա պատասխանիցն է կախված գործի պարզվելը:

Պ. Մելիք-Մէրաբովը ասաց, թէ ինքը չէ յիշում, որ իր և պ. Արծրունու մէջ եղած լինէր պայման կամ համաձայնութիւն, որով թոյլ տրված լինէր նրան իր լրագրի բաց մնացած տեղերը լցնել լուրերով և զանազան նկատողութիւններով: Եւ եթէ լինէր մի այսպիսի համաձայնութիւն, դրա համար պէտք են գրաւոր ապացոյցներ, և պահանջեց, որ պ. Արծրունին ցոյց տայ, եթէ ունի որ և իցէ գրաւոր ապացոյց: Բացի դրանից, պ. Մելիք-Մէրաբովը աւելացրեց, գուցէ ասել է պ. Արծրունուն տպել որ և իցէ լուր առանց թոյլտուութեան, բայց դրանք պէտք է լինէին այն լուրերը միայն, որոնք առաջուց տպված են եղել տեղական ռուս լրագրների մէջ և, ի հարկէ, ցենզուրայից թոյլտուութիւն ստացած են եղել:

Այնուհետև պ. Արծրունին առաջարկեց պ. Մելիք-Մէրաբովին մի քանի հարցեր, ի միջի այլոց և այն,—արդեօք յիշում է պ. Մելիք-Մէրաբովը, որ անցեալ տարվայ ամառը ինքը Կօջօրում բնակվելու ժամանակ, «Մշակի» համարները դուրս էին գալիս առանց իրա, Մելիք-Մէրաբովի, նախապէս թոյլտուութեան, և հրատարակվելուց յետոյ մի քանի շաբաթների համարները ուղարկվում էին նրան ստորագրելու համար: Եւ միթէ ինքը, պ. Մելիք-Մէրաբովը, գո՞հ չէր այդ տեսակ յարաբերութիւնից, և չէր յայտնում այն միտքը, թէ առանց փոխադարձ հաւատարմութեան դժուար է հրատարակել մի ամենօրեայ թերթ:

Պ. Մելիք-Մէրաբովը պատասխանեց, թէ ինքը Կօջօրում եղած ժամանակ «Մշակի» համարները առաւօտեան դիլիջանսով ուղարկվում էին իրան քննելու համար և ինքը վերադարձնում էր երեկոյեան: Իսկ այն ժամանակ, երբ ինքը հիւանդ էր, չը գիտէ, թէ ինչ կարգադրութիւն է արել ցենզուրական կօմիտէտը:

Այնուհետև սկսեցին հարցնել միւս վկաներին: Վկայ Մարտիրոսեանցը յայտնեց, թէ երկու տարի առաջ, երբ «Մշակը» իր տպարանում էր տպվում, շատ անգամ ամբողջ համարներ կամ զանազան լուրեր տպվում էին առանց ցենզորի թոյլտուութեան: Միխայլովի տպարանի կառավարիչ Մեղվինովը յայտնեց, թէ ոչ միայն մինչև «Մշակի» 211, 212, 213 և 214 համարները, այլ նրանից շատ առաջ, առանց ցենզորի թոյլտուութեան «Մշակի» մէջ տպվում էին զանազան լուրեր և նկատողութիւններ, երբ բաց տեղ էր մնում: Վկայ Բաբաջանեան յայտնեց, թէ ինքը և միւս գրվողները շատ անգամ իր ժամանակին տանում էին «Մշակի» թերթերը ցենզորի մօտ կամ նրան տանը չէին գտնում, կամ եթէ գտնում էին, չէր ընդունում, ասելով ուշ է:

Վկաների ցուցմունքներից յետոյ պ. պրօկուրօրը